ԳՐԱԲԱՐՈՒՄ ԲԱՂԱՁԱՅՆԱՀԱՋՈՐԴ Ն-ՈՎ ՎԵՐՋԱՑՈՂ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐԵՆ ՍԱՆԹՈՅԱՆ, ՇՈՂԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հին հայերենում արձանագրվել են «բաղաձայն+ն» կաղապարով վերջավորվող զգալի թվով բառեր, որոնք ունեին հոլովման առանձնահատուկ տիպ. դրանք հոլովվում էին ներքին թեքման ա *պարզ և* ի-ա *խառը հոլովումներով*[1]*: Այդ բառերի բաղաձայնահաջորդ* ն*-ի առկայությունը բավական հին երևույթ է, սակայն ուսումնասիրողները միշտ չէ, որ համակարծիք են վերջնահանգ* ն*-ի նախնականության հարցում:*

Հր. Աճառյանը ն- *ն համարում է արմատական, չնայած չի գտնում համապատասխան հնդեվրոպական բառերի մեջ*[2]*: Նա տալիս է հետևյալ բացատրությունը. «Հնդեվրոպական նախալեզվում* n*-ն ոչ միայն չեզոքի նշան է, այլև եզակի հայցականի: Հայցականը կարող է երբեմն բռնել ուղղականի տեղը, օրինակ՝ արդի հայերենում* երկուս, չորս, բաղանիս, բաղնիս*.....: Այդպես էլ հնագույն հայերենում հնդեվրոպական շրջանի հայցականն անցել է ուղղականի տեղը: Այդպես էր կարծում նաև Մեյեն»*[3]*:*

Հ. Մուրադյանը «բաղաձայն+ն» զուգորդությունը համարում է զուտ հայկական գոյացություն՝ առաջացած նախապատմական շրջանում հնդեվրոպական և փոխառյալ որոշ բառերի համանման վերջավորությունների հիմքի վրա. ընդ որում՝ լեզվի զարգացման ինչ-որ մի փուլում այս երևույթը եղել է ընդհանուր ամբողջ հայերենի համար[4]*: Իսկ Գ. Ջահուկյանը գտնում է, որ* ն*-ով հիմքերն ընդհանուր առմամբ արտացոլում են հնդեվրոպական * n-ով հիմքերը՝ (-n, -mn, -en, -ēn և այլն): Ըստ նրա՝ այս բառերի գերակշռող մեծամասնությունը ծագում է հնդեվրոպական զանազան ածանցավոր մասնիկներով կազմված հիմքերից*[5]*:*

Ստորև քննելու ենք գրաբարում բաղաձայնահաջորդ ն*-ն կորցրած բառերի բառակազմական առանձնահատկությունները: Քննության առարկա ենք դարձրել 160 բառ*[6]*, որոնք բաշխել ենք երեք խմբերում:*

---

[1] *Այդ բառերի մի մասը արդի հայերենում հոլովվում է* ան *հոլովմամբ՝* դուռ-դռան, *մյուս մասը զուգահեռաբար կամ ամբողջությամբ հոլովվում է այլ հոլովիչներով, ինչպես՝* գառ-գառան//գառի, կաթ-կաթի*:*

[2] *Տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Երևան, 1971, էջ 715:*

[3] *Նույն տեղում, էջ 716:*

[4] *Տե՛ս Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 323:*

[5] *Տե՛ս Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 254:*

[6] *Յանկը կազմելիս հաշվի չենք առել* -ումն *ածանցով բառերը, որոնք բոլորն էլ կորցրել են վերջնահանգ* ն*-ն (բացի* լրումն *բառից):*

Ա. Բառեր, որոնք արդի հայերենում կորցրել են վերջնահանգ ն-*ն և ունեն անկախ գործածություն: Նշենք, որ այդ բառերից մի քանիսը* ն-*ն կորցրել են դեռևս - հին հայերենում, և մատենագրությամբ զուգահեռաբար ավանդվել են դրանց* ն-*ով և առանց* ն-*ի ձևերը, ընդ որում՝ տարբեր հոլովումներով, ինչպես՝* որմ-որմոյ// որմն-որման, սունկ-սնկոյ// սունկն-սնկան*: Կա կարծիք, որ հին հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներում* ն-*ի կորուստ ունեին* ն-*ահանգ նաև այլ բառեր, որոնց գոյությունը ենթադրվում է ըստ արդի բարբառներում առկա լեզվական որոշ փաստերի*[7]*:*

Այս խմբին պատկանող բառերի թիվը մեր հաշվումներով 87-ն է՝ ազբ(ն), ամառ(ն), այծյամ(ն), անձ(ն), ասեղ(ն), ափ(ն) *«ջրի եզր»*[8], ատամ(ն), արմունկ(ն)[9], բամբիռ(ն)//փանդիռ(ն), բեռ(ն), բուռ(ն), բութ(ն)[10], բուրգ(ն), բնդեռ(ն), գազաթ(ն), գաղձ(ն), գառ(ն), գեղարդ(ն), գեղմ(ն), գուղձ(ն)*, դալուկ(ն), դիակ(ն), դաղձ(ն), դուռ(ն), եզ(ն), ելունդ(ն), եղյամ(ն), եղեգ(ն), եղունգ(ն), եռանդ(ն), թակ(ն)*, թոռ(ն), թիթեղ(ն), լեռ(լեառն), լորձ(ն)*, լիսեռ(ն), խուփ(ն)*, խուրձ(ն)*, ծոռ(ն)[12], ծունկ(ն), կաթ(ն), կայծակ(ն), կառափ(ն), կնճիռ(ն), կոտեմ(ն)*, կուռ(ն), կունձ(ն), կողմ(ն), կրունկ(ն)*, հարս(ն), հարց(ն)*, ձեռ(ն), ձմեռ(ն), ձուկ(ն), ճիգ(ն), ճպուռ(ն), մաս(ն), մատ(ն), մատուռ(ն), մժեղ(ն), մուկ(ն), մութ(ն), յոթ(եաւթն), շուրթ(ն), նուռ(ն), ոլոռ(ն), ող(ն), նեռ(ն), ոսպ(ն), որդ(ն), ոտ(ն)[15], որմ(ն)*, որոմ(ն), պալատ(ն)*, պճեղ(ն), ջայլամ(ն), ջերմ(ն)*, ռունգ(ն), սաղմ(ն)*, սերմ(ն), սիսեռ(ն), սկիզբ(ն), սունկ(ն)*, տուտ(ն), փայլակ(ն), փայծաղ(ն), փուռ(ն)*:*

Այս ցանկում տեղ են գտել ոչ միայն արմատական, այլ նաև ածանցավոր չորս բառ՝ այծյամ(ն), դիակ(ն), կայծակ(ն), փայլակ(ն)*, ընդ որում՝ վերջին երեքն ունեն* ակ(ն) *վերջածանցը*[16]*:*

---

[7] *Տե՛ս Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 331:*

[8] *Մ. Աբեղյանը վերջնահանգ* ն-*ով (ափն) ձևին վերագրում է «ձեռքի մաս» նշանակությունը, իսկ առանց* ն-*ի ձևին՝ «գետի ափ»՝ նշելով. «գետի ափը միայն «ափ» ձևով» (տե՛ս Մ. Ա բ ե ղ յ ա ն. Հայոց լեզվի տեսություն Երևան, 1965, էջ 197): Գրաբարյան բառարանները (ՆՀԲ, ԱԲ), սակայն, վկայում են հակառակը:*

[9] *Հին հայերենում ունեցել է նաև* արմուկն *ձևը:*

[10] *Բոլոր այն բառերը, որոնք հին հայերենում ունեցել են* ն-*ով և առանց* ն-*ի զուգահեռ ձևեր, ցանկում նշվում են *-ով:*

[11] *Հին հայերենում* ն-*ով և առանց* ն-*ի ավանդված բառերի շարքում ենք գետեղել նաև* խուրձ *բառը, որը թեև ՆՀԲ-ն նշում է միայն* խուրձ *ձևով, բայց բերված բոլոր օրինակները, բացառությամբ մեկից, թեք հոլովաձևերով են, որոնք կազմվել են վերջնահանգ* ն-*ով բառերի օրինաչափությամբ՝* ա *ներքին հոլովմամբ: Իսկ ՀԱԲ-ը բառի ուղիղ ձևը համարում է* խուրձն:

[12] *Բառը ցանկում նշում ենք պայմանականորեն. այն վկայված չէ հին հայերենի բառապաշարն ամփոփող որևէ բառարանում (ՆՀԲ, ԱԲ, ՀԱԲ), սակայն բառի ձևը ենթադրել է տալիս նրա հին, թերևս, բարբառային ծագումը:*

[13] *Հին հայերենում ունեցել է նաև* կոտիմն *ձևը:*

[14] *Զուգահեռաբար ունեցել է նաև* կրուկն *ձևը:*

[15] Ձեռ(ն) *և* ոտ(ն) *բառերն այս խմբում գետեղվել են պայմանականորեն. արդի հայերենում այս ձևերն առանց* ք-*ի հանդիպում են ժողովրդախոսակցական լեզվում. գրական հայերենի համար ընդունելի են* ձեռք, ոտք *տարբերակները: Սակայն քանի որ* ձեռ, ոտ *ձևերը հանդիպում են նաև դարձվածքներում (հմմտ.* ձեռ առնել, ոտ գցել*), ուստի քննում ենք նաև այս բաժնում:*

[16] *Այն, որ այս բառերում* ակ(ն)*-ը ածանց է, հիմնավորվում է նրանով, որ* ակն *արմատը վերջնահանգ* ն-*ն պահպանել է (հմմտ. թխակն, խաժակն):*

Բ. Բառեր, որոնք արդի հայերենում պահպանել են վերջնահանգ ն-*ն և ունեն անկախ գործածություն: Մեր հաշվումներով նման բառերի թիվը 23-ն է՝* բաստեռն, բևեկն, բուռն «ուժգին», դառն, դույզն, եղեռն, երբեմն, ինքն, ինն, լրումն, խառն, խուռն, կառն «փուշ», կոզռն «ուխտի ձագ», հյուսն, հախուռն, հանդուգն, ոմն, սառն, ստեղն, տասն, տոռն[17], ուրեմն*:*

Սրանցից 6-ը ն-*ին զուգահեռ ունեն նաև* ը-*ով վերջավորվող ձևեր՝* դառն//դառը, ինն//ինը, ինքն//ինքը, խառն//խառը, սառն//սառը, տասն//տասը*: Հ. Մուրադյանը գտնում է, որ զուգահեռ* ը *ունեցող բառերում* ը-*ն ծագել է* ն-*ից առաջ արտասանվող* ը-*ից.* ն-*ի անկումից հետո պահպանվել է այդ* ը-*ն*[18]*: Սակայն այս օրինաչափությունը չի գործել* բուռն, բևեկն, երբեմն, լրումն, խուռն, կառն, կոզռն, հյուսն, հախուռն, հանդուգն, ոմն, սառն, ստեղն, ուրեմն *բառերում: Կարծում ենք, պատճառն այն է, որ այս բառերը գրական հայերենին են անցել ոչ թե բանավոր (ժողովրդախոսակցական), այլ գրավոր ճանապարհով, այլապես, անկասկած, կգործեր համաբանության օրենքը, և սրանք էլ կկորցնեին վերջնահանգ* ն-*ն:*

Այս ցանկում նույնպես առկա են ածանցավոր բառեր՝ երբեմն, ուրեմն, լրումն*: Վերջինը պահպանվել է միայն «ի լրումն» կապակցության մեջ*[19]*: Նկատելի է, որ ածանցավոր բառերն ավարտվում են* մն *հնչյունակապակցությամբ: Սակայն այստեղ դժվար է որևէ օրինաչափություն գտնել.* մ-*ից հետո* ն-*ն ընկել է* ատամ, այծյամ, եղյամ, կոտեմ, ջերմ, որոմ, սաղմ, սերմ *բառերում և պահպանվել ընդամենը երեք՝* երբեմն, լրումն, ուրեմն *բառերում: Չենք կարող նաև ենթադրել, որ* մ-*ից հետո* ն-*ն ընկել է արմատական բառերում և պահպանվել ածանցավորներում, քանի որ* ն-*ն ընկել է ածանցավոր* այծյամ *բառում և* լրումն *բառից բացի՝* -ումն *ածանց ունեցող բոլոր բառերում (հմմտ.* դիմում, երդում, ծագում, ուսում *և այլն): Ընդ որում՝ արդի հայերենի տեսակետից արմատական համարվող* կողմ, ջերմ, սերմ *բառերը ստուգաբանորեն նույնպես ածանցավոր են: Այսինքն՝* ն-*ի անկումը հատկապես չի կապվում բառի պարզ կամ ածանցավոր լինելու հետ:*

Ն-*ի անկման օրինաչափություն չի նկատվում նաև* ոն *վերջավորվող բառերում. դրանց մի մասում պահպանվել է* ռ-*ին հաջորդող* ն-*ն, ինչպես՝* դառն, խառն, խուռն, հախուռն, սառն, տոռն, *իսկ մյուս մասում ընկել է՝* ամառ, բեռ, գառ, դուռ, լեռ *և այլն: Մեր կարծիքով, այս խմբի բառերի վերջնահանգ* ն-*ն պահպանվել է բառի հետագա կրճատման անհնարինության պատճառով: Այսինքն՝ եթե այս բառերը կորցնեին վերջնահանգ* ն-*ն, բառապատկերը կաղավաղվեր, և բառը կդառնար անճանաչելի: Հմմտ. հատկապես* ն-*ի անկումով* ին(<ինն), ոմ (<ոմն), դառ (<դառն), ինք (<ինքն), եղեռ (<եղեռն) և *մյուս բառերը:*

Գ. Բառեր, որոնց գրաբարյան ելակետային ձևը (բառույթը) արդի հայերենում անկախ գործածություն չունի (բառույթ չէ): Այս խմբի բառերը կարելի է բաժանել երեք ենթախմբի.

---

[17] *Գործածական է միայն բարբառներում, ունի «թոկ, լար» իմաստները:*

[18] *Տե՛ս Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 333:*

[19] Ի լրումն *կապակցությունից բացի՝ կան բայանուններով կազմված այլ կապակցություններ ևս, ինչպես՝* ի նշանավորումն, ի փոփոխումն *և այլն: Սրանց բայանունները, սակայն, բառարաններում վերջնահանգ* ն-*ով վկայված չեն, ուստի և բուն շարադրանքում չենք նշում:*

ա) Բառեր, որոնց գրաբարյան հոգնակիները արդի հայերենում գործածվում են որպես ելակետային ձևեր՝ բառույթներ, այսինքն՝ այդ բառերն ածանցավոր են, քանի որ հինհայերենյան հոգնակերտները արդի հայերենում ունեն ածանցի արժեք: Մեր հաշվումներով այդպիսի բառերի թիվը 9-ն է՝ ակունք (<ակն)[20], դաշինք (<դաշն), երկունք (<երկն), թիկունք (<թէկն կամ թիկն), ձեռք (<ձեռն), ոտք (<ոտն), հիմունք // հիմք (<հիմն), ուլունք (<ուլն), քրտինք (<քիրտն)*:*

բ) Բառեր, որոնք արդի հայերենում անկախ գործածություն չունեն և պահպանվել են միայն բաղադրյալ (ածանցավոր և բարդ) ձևերում: Այդպիսի բառերի թիվը 18-ն է՝ ազն (դյուցազն), ակն (ակնդետ, ակնապիշ), այպն (այպանել), բեղն կամ բեղմն (բեղմնավոր), բուռն (բռնություն)[21], եղն (եղնիկ), երփն (երփներանգ), խաշն (խաշնարած), ծիծեռն (ծիծեռնակ), համուռն (միահամուռ), հեգն կամ հենգն (հեգնանք), մառն (մառախուղ), մեկն (մեկնություն), յոգն (հոգնակի), շիկն (շիկնել), ունկն (ունկնդիր), օգն (օգնություն), օրհն (օրհնություն)*:*

գ) Բառեր, որոնք արդի հայերենում չեն գործածվում ոչ անկախաբար, ոչ էլ բաղադրությունների կազմում: Դրանց թիվը 23-ն է՝ առն «ոչխար», բանկն//բանգն «զրպարտություն», բուծն «պատրույգ», գերբն «ջնջոց», դոխն «ջաղացի ձագար», խլիրդն «հիվանդություն», կարշն «աղեղի լար», կնճիթն «կորեկանման բույս», կոռն «կոթ», կրճիմն «միջնորմ», կունդն «գնդաձև անիվ», հանգուշն «զգույշ», ոռն «գամ, սեպ», պոյտն «փոքր կաթսա», սեռն «սայլի անիվ», նաև «պարզ, անխառն», ստաշխն//տաշխն «ծառի խեժ», վասն «մասին», վիգն «վայրի ոլոռ», տառեղն «արագիլ», տուռն «շեղջ, դեզ», ուլն («պարանոց» իմաստով), փակեղն «ծածկոց», քիսամն «վայրի ոլոռ»[22]*:*

Բառակազմության ժամանակ[23] ըստ վերջնահանգ ն*-ի պահպանման կամ անկման՝ Ա խմբի բառերը բաժանվում են երեք ենթախմբի.*

---

[20] *Այս բառը հին հայերենում գործածվել է երեք իմաստներով՝ 1. «աչք», 2. «աղբյուրի ակ», 3. «թանկագին քար»:* Ակունք *բառը սրանցից երկրորդի հոգնակին է, իսկ մյուս երկու իմաստներով* ակն *բառը պահպանվել է բաղադրություններում, ինչպես՝ ակնեղեն, խաժակն:*

[21] *Բառը հին հայերենում գործածվել է երեք իմաստներով՝ 1. «ձեռքի ափ», 2. «ուժգին», 3. «բռնություն»: Առաջին իմաստով պատկանում է առաջին խմբին, երկրորդ իմաստով՝ երկրորդ խմբին, երրորդ իմաստով՝ երրորդ խմբին:*

[22] *Այս խմբում չենք նշում հունարենից փոխառված* ակառն «բերդ», կանկեղն «վանդակ», կարակն «մկրատ», կիստեռն «ավազան» *բառերը, քանի որ բոլորն էլ եզակի վկայություններով են ավանդված և համահայկական գործածություն, ամենայն հավանականությամբ, չեն ունեցել:*

[23] *Մ. Աբեղյանը, խոսելով վերջնահանգ* ն*-ն կորցրած բառերի բառակազմության մասին, գրում է, որ «բառակազմության (բարդության և ածանցման) ժամանակ, ինչպես և հոգնակի թվի մեջ, սակավ բացառությամբ, այսպիսի բառերի վերջին «Ն» տառը վերականգնվում է» (Մ. Ա բ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 197): Եթե ենթադրենք, որ առանց* ն*-ի բաղադրյալ ձևերը առաջացել են 1931՝ նշված աշխատության առաջին հրատարակությունից հետո, ապա, միևնույնն է, Աբեղյանի տեսակետը կմնա խոցելի, քանի որ դեռ գրաբարում կային առանց վերջնահանգ* ն*-ի ավանդված ձևեր:*

Նույն կարծիքին է նաև Ալ. Մարգարյանը. ներկայացնելով իսկական բարդությունների ընդհանուր և առանձնակի հատկանիշները՝ նա գրում է. «Առաջին բաղադրիչը բարդության մեջ գործածվում է իր երբեմնի՝ գրաբարյան ն *վերջնահանգով» [Ա լ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, 1990, էջ 119]:*

Ա. 1. Բառեր, որոնք բառակազմության ժամանակ վերջնահանգ ն-*ն չեն պահպանում ոչ մի դեպքում (նկատի ունենք թե՛ ածանցումը, թե՛ բառաբարդումը): Դրանց թիվը վերոհիշյալ 87 բառերից 35-ն է՝* ազբ (ազբեստ, ազբափայտ), արմունկ (արմնկային, արմնկածալ), ափ (ափային, ափեզր), բնդեռ//բնդիռ (կոյաբնդիռ), բութ (բթամատ, բթաչափ), բուրգ (բրգավոր, բրգաձև), գեղարդ (գեղարդավոր, գեղարդակիր), գուղձ (գուղձուտ, գուղձանման), դալուկ (դալկություն, դալկադեմ), դաղձ (դաղձալի, դաղձախոտ), դիակ (դիակեզ, դիակային), ելունդ (ելունդավոր, ելունդածածկ), եղյամ (եղյամախառն, եղյամոտ), եռանդ (եռանդագին, ջերմեռանդ), թակ (թակիչ, թակակոփ), թիթեղ (թիթեղագործ, թիթեղյա), խուրձ (խրձավոր, խրձակապ), խուփ (խուփավոր, խուփբերան), ծունկ (ծնկային, ծնկածալ), կնճիռ (կնճռոտ, կնճռադեմ), կոտեմ (ջրկոտեմ), կրունկ (կրնկավոր, կրնկակոխ), հարց (հարցական, հիմնահարց), ճպուռ (ճպռանույշ), մատուռ (մատուռաձև, մատուռապահ), մժեղ (մժեղային, մժեղասպան), նեռ (նեռադավան), պալատ (պալատական, պալատամերձ), պճեղ (պճեղավոր, պճեղախտ), ջայլամ (ջայլամային, ջայլամափետուր), ջերմ (ջերմոց, ջերմախտ), ռունգ (ռնգային, ռնգախոս), սիսեռ (սիսեռիկ, սիսեռածաղիկ), սունկ (սնկապուր, սնկային), տուտ (ոսկետուտ, տուտագալար)*: Սրանց մի մասը (*արմունկ, բութ, գուղձ, թակ, խուրձ, խուփ, ծունկ, հարց *) դեռևս գրաբարում հանդես էր գալիս նաև առանց* ն-*ի և բաղադրությունների մեջ էր մտնում միայն* ն-*ի անկմամբ, ինչպես՝* արմունկ>արմնկաչափ, թակ>թակաղ, խուփ>խփընկեց, ծունկ>ծնկակապ, ծնկասեր, հարց>հարցական, հարցասեր, հարցաքննություն *և այլն: Եթե սրանք արդեն գրաբարում բաղադրությունների կազմում հանդես էին գալիս առանց* ն-*ի, ապա, բնական է, որ* ն-*ն չէին կարող պահպանել ավելի ուշ շրջանում կազմված բաղադրություններում:* Բութ, գուղձ, խուրձ, կրունկ, պալատ *բառերով գրաբարում կազմված ոչ մի բաղադրություն չկա*[24]*: Հին հայերենից ավանդված բաղադրություններ չունեն նաև* բուրգ, դալուկ, դաղձ, դիակ[25], ելունդ, թիթեղ[26], կնճիռ, ճպուռ, պալատ, ջայլամ, ջերմ[27], սիսեռ, սունկ *բառերը: Սրանցով կազմված բոլոր բաղադրությունները նորակազմություններ են և* ն-*ն չեն պահպանել, ինչպես՝* բրգաձև, բրգանման, դալկադեմ, տխրադալուկ, դաղձախոտ, դաղձահամ, դիակային, դիակակիր, դիակակեզ, դիականման, ելունդածածկ, ելունդավոր, թիթեղյա, թիթեղագործ, թիթեղածածկ, թիթեղատանիք, կնճռոտ, ճպռանույշ, պալատամերձ, պալատաշինություն, ջայլամապտեր, ջայլամատուն, ջերմախտ, սիսեռիկ, սիսեռահատիկ սնկային, սնկիկ, սնկաքար, սնկենի, ծառասունկ, յուղասունկ*: Այս խմբում կան բառեր, որոնցով գրաբարում բաղադրություններ են*

---

[24] *Եթե եղել էլ են, ապա ավանդվել են ոչ թե գրավոր, այլ բանավոր ճանապարհով: Համենայն դեպս այդպիսիք չկան ՆՀԲ-ում, ԱԲ-ում և ՀԱԲ-ում:*

[25] Ն-*ով երեք ձև կա՝* դիակնանալ, դիակնահոտ, դիակնախույզ, *որոնք բառարաններում նշվում են որպես ոչ հանձնարարելի ձևեր:*

[26] Ն-*ով երկու ձև կա՝* թիթեղնեղեն, թիթեղնավոր, *որոնք բառարաններում նշվում են որպես ոչ հանձնարարելի ձևեր:*

[27] *Որպես ածական* ջերմ *բառը գրաբարում հանդես էր գալիս առանց* ն-*ի, իսկ* ջերմն *ձևը գոյական էր, որից բաղադրված միայն երեք բառ կա՝* ջերմախտ, ջերմոց *և* ջերմել*: Սրանք երեքն էլ նոր կազմություններ են:*

կազմվել ն-*ի պահպանմամբ, սակայն այդ բաղադրություններից ոչ մեկը ժամանակակից հայերենում գործածական չէ. այժմ գործածվող բոլոր բաղադրությունները հետին կազմություններ են:*

Այսպես՝ հին հայերենում ունենք եղեմնապատ, եղեմնախառն *ձևերը, որոնց արդիհայերենյան տարբերակներն են՝* եղյամապատ, եղյամախառն, *նորակազմություններ են* եղյամածածկ, եղյամածին, եղյամաշունչ, եղյամարկու *բառերը:* Ափ *բառով բոլոր բաղադրությունները նորակազմություններ են, ինչպես՝* ափիկ, ափագիծ, ափեզր, ափաբերան, *իսկ գրաբարից ավանդված* ափնածիր *բառն այժմ գործածական չէ:* Պճեղ *բառով կազմված բոլոր բաղադրությունները նոր են, գրաբարից ավանդվել է միայն* պճղնավոր *բառը, որը արդի հայերենում* ն-*ն չի պահպանել՝* պճեղավոր: Ռունգ *արմատով գրաբարյան բաղադրություններն արդի հայերենում գործածական չեն*[28], *իսկ նոր կազմությունները բոլորը* ն-*ի անկմամբ են, ինչպես՝* ռնգաբզեզ, ռնգախառն, ռնգախոս, ռնգածակ, ռնգեղջյուր, ռնգային *և այլն:* Մատուռ *բառով արդի հայերենում երեք բաղադրություն կա կազմված՝* մատուռաձև, մատուռանման, մատուռապահ, *իսկ* մատրանոց և մատրանապետ *բառերը գրաբարյան կազմություններ են՝ բառի սեռական հոլովաձևից:* Գեղարդ *բառի գրաբարյան՝* ն-*ով բաղադրությունները ժամանակակից հայերենում ունեն առանց* ն-*ի տարբերակներ:*

Որոշ բառեր գրաբարում արմատական ձևերում ն-*ն պահպանել են, ինչպես՝* ազբն, բնդեռն//բնդիռն, մժեղն, նեռն, տուտն, *իսկ բաղադրություններում՝ ոչ, օրինակ՝* ազբոց, մժղուկ, կոյաբնդիռ//կոյաբնդեռ, նեռադավան, ոսկետուտ, տտուն: *Այս բառերով կազմված նոր բաղադրությունները, ինչպես և սպասելի էր, առանց* ն-*ի են՝* ազբեստ, ազբաթել, ազբասանր, ազբափայտ, տուտազալար, երկարատուտ, մժեղասպան, մժեղացանց, մժեղամազ *և այլն:*

Ինչպես տեսնում ենք, այս խմբում հիմնականում այն բառերն են, որոնք վերջնահանգ ն-*ի անկմամբ բաղադրություններ են կազմել դեռևս հին հայերենում, ընդ որում՝ դրանց մի մասը նաև արմատական ձևերում էր հանդես գալիս առանց* ն-*ի:*

Ա. 2. Բառեր, որոնք բառակազմության ժամանակ ն-*ն պահպանում են: Այս խմբին պատկանող բառերը վերոհիշյալ 87-ից 22-ն են՝* անձ (անձնական, անձնագիր), բեռ (բեռնաձի, բեռնաքարշ), գառ (գառնենի, գառնարած), թոռ (թոռնիկ, թոռնատեր), լեռ[29] (լեռնային, լեռնաբնակ), ծոռ (ծոռնուհի, ծոռնորդի), կուռ (կռնակ, կռնատակ), ձուկ (ձկնիկ, ձկնաբույծ), նուռ (նռնակ, նռնագեղ), որոմ (որոմնային, որոմնաշատ), ող (ողնակ, ողնախտ), սաղմ (սաղմնային, սաղմնաբանական), սկիզբ (սկզբնակ, սկզբնաբան), փայլակ (փայլակնացայտ, փայլակնաբիբ)*: Այս խմբում հիմնականում այն բառերն են, որոնցով կազմված բաղադրությունները կամ դրանց մեծ մասը ավանդվել են գրաբարից, այդ իսկ պատճառով էլ* ն-*ն միշտ պահպանում են: Այսպես՝* անձ *բառով կազմված բաղադրությունների զգալի մասը ավանդվել է գրաբարից՝* անձնատուր, ստանձնել, անձնա-

---

[28] *Պահպանվել է միայն* արծռունգն *բառը, սակայն* ն-*ի անկմամբ. դարձել է* արծվառունգ:

[29] Ն-*ն ընկել է երկու բառում՝* լեռընդմեջ, լեռուբեռ, *որոնք, սակայն, կցական բարդություններ են:*

պաստան, վեհանձն, միանձնուհի *և այլն: Ավելի ուշ շրջանում կազմված բաղադրություններում սրանց համաբանությամբ պահպանվել է գրաբարյան* ն-*ն* ՝ անձնանիշ, անձնազոհ, անձնագիր *և այլն:* Գառ *բառով կազմված բաղադրությունների մեծ մասը գրաբարյան է, ինչպես* ՝ գառնաբարո, գառնադմակ, գառնազգեստ, գառնենի, գառնիկ, գառնանման, գառնածին, գառնականջ *և այլն: Մյուս մասը կազմվել է կա՛մ սրանց համաբանությամբ, կա՛մ էլ դրանք հին կազմություններ են, որոնք ավանդվել են ոչ թե մատենագրությամբ, այլ բանավոր ճանապարհով, ինչպես* ՝ գառնակերպ, գառնամայր, գառնանգղ, գառնարած, գառնակերպար *և այլն:* Որոմ *բառով կազմված բոլոր բաղադրությունները, բացի* որոմնային *բառից, գրաբարից են* ՝ որոմնաբեր, որոմնաբույս, որոմնախառն, որոմնացան *և այլն: Մեծ մասամբ գրաբարից են ավանդվել նաև* լեռ, ձուկ, ող, սկիզբ, փայլակ *բառերով կազմված բաղադրությունները, ինչպես* ՝ լեռնաբնակ, լեռնագնաց, լեռնախույզ, լեռնական, լեռնամեջ, լեռնային, ձկնիկ, ձկնորս, ձկնակեր, ձկնակերպ, ողնածուծ, ողնաշար, ողնուց, ողնահար, սկզբնակ, սկզբնաբան, սկզբնական, սկզբնականապես, փայլակնաբար, փայլակնակերպ, փայլակնանման, փայլակնաձև, փայլակնահար, փայլակնաբեր, փայլակնավոր *և այլն: Գրաբարից է ավանդված* կուռ *բառով կազմված* կռնակ *ձևը, մյուս բոլոր կազմությունները բարբառային-խոսակցական են, որոնք, ամենայն հավանականությամբ, նույնպես հին կազմություններ են, ինչպես* ՝ կռնատ, կռնատակ, կռնակակից*:* Նուռ *բառը գրաբարում կազմված երկու բաղադրություն ունի* ՝ նռնենի, նռնաձև. *մյուս բոլոր բաղադրությունները (նռնակ, նռնագավաթ, նռնագեղ, նռնագույն, նռնազգի, նռնահատ և այլն) նորակազմություններ են՝ կազմված սրանց համաբանությամբ: Գրաբարյան ծագում ունեն* թռռնակից, թռռնորդի *բառերը, վերջինիս համաբանությամբ կազմված նոր ձևեր են* թռռնադուստր, թռռնաղջիկ, թռռնատեր*: Ինչպես նկատելի է, գրաբարյան* ն-*ով ձևերն այնքան շատ են և տարածված, որ նորակազմություններն էլ համաբանությամբ վերականգնում են գրաբարյան վերջնահանգ* ն-*ն:*

Այս՝ Ա. 2. ենթախմբի բառերի մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանք չեն պահպանում վերջնահանգ ն-*ն, եթե հանդես են գալիս որպես բաղադրության վերջին բաղադրիչ: Այսպես* ՝ դուռ *բառով կազմված բաղադրությունների հիմնական մասը գրաբարյան կազմություններ են* ՝ դռնապահ, դռնապան, դռնաբաց, դռնբաց, դռնփակ, դռնափակ, դռնակ*: Նոր կազմություններում նույնպես* ն-*ն պահպանվել է, եթե բաղադրության առաջին բաղադրիչ է* ՝ դռնանման, դռնամեջ, դռնամուտ *և այլն: Գրաբարից է ավանդվել նաև* գեղմ, եղեգ, կողմ, ճիգ, մաս, մուկ *բառերով կազմված բաղադրությունների մեծ մասը, ինչպես* ՝ գեղմնավոր, գեղմնավետ, եղեգնուտ, եղեգնյա, եղեգնացուպ, եղեգնատունկ, կողմնապահ, կողմնակից, կողմնակալ, կողմնակի, կողմնավոր, ճգնություն, ճգնական, ճգնավոր, ճգնողական, ճգնազարդ, ճգնազգեստ, ճգնախոնջ, մասնական, մասնավոր, մասնակից, մասնիկ, մկնակեր, մկնաճարակ, մկնապիղծ, մկնականջ *և այլն: Այս բառերով նոր կազմություններում նույնպես* ն-*ն պահպանվել է, եթե բաղադրութ-*

յան առաջին բաղադրիչ է[30] ՝ գեղմնաբար, գեղմնաբեր, գեղմնաածաղիկ, եղեգնաբնակ, եղեգնահյուս, եղեգնահյութ, կողմնաբեմ, կողմնաշենք, կողմնորոշում, ճգնավայր, ճգնաժամ, մասնաբաժին, մասնագետ, մկնատամ, մկնդեղ*:*

Բաղադրության վերջին բաղադրիչ լինելու դեպքում սրանք հանդես են գալիս առանց ն-*ի* ՝ ոսկեգեղմ, նախադուռ, ետնադուռ, խնկեղեգ, հնդկեղեգ, շաքարեղեգ, աջակողմ, ձախակողմ, հարաճիգ, հանդամաս, կողմնամաս, ետնամաս, արջամուկ, դաշտամուկ *և այլն:*

Նույն օրինաչափությամբ է բաղադրությունների մեջ մտնում հարս *բառը. սա գրաբարում բաղադրվել է երկու ձևով՝ ուղղականով (հարսնաբար, հարսնախոս, հարսնացու, հարսնյակ, հարսնատես, հարսնամատ) և սեռականով (հարսանիք, հարսանեկան, հարսանյաց): Արդի հայերենում արդեն բազմաթիվ նոր բառեր են կազմվել* հարսանիք բառով՝ հարսանքահաց, հարսանքատեր, հարսանքատուն: Հարս *բառով նորակազմություններում* ն-*ն պահպանվել է, եթե բաղադրության առաջին բաղադրիչ է*՝ հարսնագին, հարսնահանդես, *և չի պահպանվել, եթե վերջին բաղադրիչ է*՝ նորահարս:

Հատկանշական է հետևյալը. բաղադրության վերջին բաղադրիչ լինելու դեպքում վերջնահանգ ն-*ն պահպանվում է* ակն[31] *և* ոտն *արմատներում: Պատճառը, թերևս, այն է, որ սրանցով կազմությունները տարբերվեն նույնանուն* -ոտ, -ակ, *ածանցներով կազմություններից. հմմտ.* խաժակն, թխակն, արագոտն, *ինչպես նաև*՝ եզնակ // եզնակն, բրդոտ // բրդոտն*:*

Վերջնահանգ ն-*ն պահպանվում է նաև* վեհանձն, ներանձն *բառերում, որոնք գրաբարից ավանդված ձևեր են, և* ն-*ի պահպանումը օրինաչափ էր (հմմտ. գրաբարյան* առոյգանձն, միանձն, կիսանձն, դատարկանձն*), ինչպես նաև* լիաբուռն *բառում:*

Ի տարբերություն զորամաս, հանդամաս *կազմությունների, որոնք գոյականներ են,* մաս *բառը պահպանում է վերջնահանգ* ն-*ն* մանրամասն, անմասն *բառերում, որոնք մակբայներ են. այսինքն՝ տվյալ դեպքում վերջնահանգ* ն-*ն կատարում է խոսքիմասային տարբերակում:*

Նման խոսքիմասային տարբերակում է կատարում ն-*ն նաև* առնվազն *բառում, որը, սակայն, մի անկանոն կազմություն է, քանի որ* նվազ *բառը գրաբարում չի ունեցել վերջնահանգ* ն*:*

Ա. 3. Բառեր, որոնք բաղադրություններում հանդես են գալիս թե՛ վերջնահանգ ն-*ով, թե՛ առանց* ն-*ի: Այսպիսի բառերի թիվը 30-ն է*՝ աղեղ (աղեղակիր, աղեղնազեն), ամառ (ամառային, ամառնաբույս), այծյամ (այծյամիկ, այծեմնաձն), ասեղ (ասեղակալ, ասեղնագործ), ատամ (ատամիկ, ատամնաբույժ), բամբիռ//փանդիռ (բամբռահար, փանդռնահար), բուռ (բռաչափ, բռնակ), գագաթ (գագաթամաս, գագաթնագիծ), գաղձ (գաղձազգի, գաղձնավոր), եզ (եզակերպ, եզնաճակատ), եղունգ (եղնգային, եղնգնաբերան), լիսեռ (լիսեռանման, լիսեռնիկ), լորձ (լորձաթաղանթ, լորձնաշուրթ), կայծակ (կայծակեղեն, կայծակնա-

[30] Մաս *բառով կազմված կցական բարդություններում վերջնահանգ* ն-*ն չի պահպանվում*՝ մասհանել, մասմասել:

[31] Ակն *արմատը չի մտնում մեր առանձնացրած բառերի Ա. խմբի մեջ, սակայն երևույթը ամբողջական դիտարկելու նպատակով քննում ենք* ոտն *արմատի հետ:*

հար), կառափ (կառափիչ, կառափնարան), ձեռ (ձեռագիր, ձեռնափայտ), ձմեռ (ձմեռանոց, ձմեռնաբեր), մատ (մատոսկր, մատնագիր), մութ (մթագին, մթնոլորտ), յոթ (յոթական, յոթնյակ), շուրթ (շրթակալ, շրթնային), ոլոռ (ոլոռահատ, ոլոռնախոտ), ոսպ (ոսպապուր, ոսպնյակ), ոտ (ոտիկ, ոտնաբաց), որդ (որդաթափ, որդնակերպ), որմ (որմափակ, որմնաբեկոր), սերմ (սերմացու, սերմնացան), փայծաղ (փայծաղային, փայծաղնացավ), փուռ (փռապան, փռնչոր):

Այս խմբի բառերի մի մասի գրաբարյան բաղադրությունները ն-*ով են, արդիհայերենյանները՝ առանց* ն-*ի, այսպես՝* որդնոտ, որդնանման, որդնալից, որդնալի, որդնահար *ձևերը ավանդվել են գրաբարից, իսկ* որդաթափ, որդախոտ, որդահան, որդահասկիկ, որդաներկ *բառերը նորակազմություններ են: Այս նույն օրինաչափությամբ են բաղադրություններ կազմել նաև* ասեղ (հմմտ. ասեղնագործ, ասեղնակարկատ և ասեղակալ, ասեղաձև), բամբիռ //փանդիռ (հմմտ. փանդռնահար, փանդռներգակ և բամբռահար, բամբռասաց), գաղձ (հմմտ. գաղձնավոր և գաղձազգի), եղունգ (հմմտ. եղնգնաքար, եղնգնաբերան և եղնգավոր, եղնգաբուն), յոթ (հմմտ. յոթնաբաժին, յոթնօրյա և յոթգլխանի, յոթհարկանի) *բառերը:*

*Բառերի երկրորդ խումբը (*ամառ, ատամ, լորձ, կառափ, ձեռ, ձմեռ, մութ, սերմ*) գրաբարում բառակազմության մեջ է մտել երկու ձևով էլ՝* ն-*ով և առանց* ն-*ի, օրինակ՝* ամարանոց, ամառնամուտ[32], ատամացի, ատամնավոր, լորձային, լորձնատեսակ, կառափել, կառափնահատ, ձեռագործ, ձեռնտու, ձմեռային, ձմեռնամուտ[33], մթագույն, մթնակերպ, սերմանիչ, սերմնակեր*: Այս առանձնահատկությունը պահպանվել է նաև ժամանակակից հայերենում, ինչպես՝* ամառային, ամառնաբույս, ատամհատիկ, ատամնաբույժ, եռանդագին, եռանդնաբորբ, լորձաբեր, լորձնահոսություն, կառափիչ, կառափնարան, ձեռագիր, ձեռնափայտ, ձմեռադիմացկուն, ձմեռնացան, մթնշաղ, մթաթափանց, սերմնաբան, սերմազտիչ*:*

*Բառերի երրորդ խումբը (*աղեղ, գագաթ, եզ, կաթ, մատ, շուրթ, ոլոռ, ոսպ, փայծաղ*) գրաբարում բառակազմության մեջ է մտել միայն* ն-*ով, իսկ ժամանակակից կազմությունները երկու ձևով են, ինչպես՝* աղեղնավոր, աղեղնաձև>աղեղային, աղեղնաձիգ, գագաթնադաշն, գագաթնավոր >գագաթամաս, գագաթանման, եզնավար, եզնակ>եզակերպ, եզնաճակատ, կաթնաբեր, կաթնաբույծ>կաթաման, կաթնաբուխ, մատնանշան, մատնացույց[34]>մատոսկր, մատնաշունչ, շրթնաշղթա, շրթնատ>շուրթակալ, շրթնատամնային, ոլոռնաձև, ոլոռնանալ>ոլոռացան, ոլոռնաբույս, ոսպնաչափ, ոսպնասպաս>ոսպապուր, ոսպնյակ, փայծաղնացավ>փայծաղաբորբ//փայծաղնաբորբ, փայծաղատապ//փայծաղնատապ*:*

---

[32] *Այս բառի սկզբնաձևը եղել է* ամար, ն-*ն հետո է հավելվել, և ավելի վաղ բաղադրություններն* ամար *արմատով են, ավելի ուշ կազմությունները՝* ամառն *արմատով:*

[33] *Սա գրաբարում բաղադրություններ է կազմել* ձմեր (ձմերային, ձմերանոց, ձմերոց, ձմերուկ) *և* ձմեռն *արմատներով: Միայն գրչության հետևանքով* ձմերային, ձմերանոց *բառերը դարձան* ձմեռային, ձմեռանոց*:*

[34] *Գրաբարում* մատն *բառը բաղադրություններ է կազմել ինչպես ուղղական, այնպես էլ սեռական հոլովաձևերով՝* մատնեմատ, մատնիչ *(ուղղական),* մատանի, մատանեզարդ *(սեռական):*

Ամփոփելով քննությունը՝ փաստենք, որ ժամանակակից հայերենում ն-*ն պահպանած ձևերի մեծ մասն ավանդվել է գրաբարից, իսկ արդի կազմությունները հիմնականում* ն-*ի անկմամբ են: Վերջնահանգ* ն-*ի անկման պատճառները մի քանիսն են: Նախ՝ դեռ գրաբարում կային բառեր, որոնք բառակազմությանը մասնակցում էին արդեն առանց* ն-*ի, և բառակազմական այդ օրինաչափությունը պահպանել են նաև հետագայում: Գրաբարյան վերջնահանգ* ն-*ի կորուստը սկսվել է, թերևս, հենց այս բառերից և համաբանությամբ տարածվել համանման արտասանական կաղապար ունեցող մյուս բառերի վրա: Վերջնահանգ* ն-*ն չեն կորցրել այն բառերը, որոնցում* ն-*ի կորուստը կհանգեցներ բառապատկերի աղավաղման և կամ էլ այլ բառի (կամ բառաձևի) հետ համանունության: Երկրորդ՝ կային բառեր էլ, որոնք գրաբարում արդեն զուգահեռաբար հանդես էին գալիս առանց* ն-*ի, և որոնցով գրաբարում բառ չէր կազմվել. այս բառերով հետագա կազմությունները, բնականաբար, պետք է կազմվեին առանց նախկին վերջնահանգ* ն-*ի, քանի որ, բառի ուղիղ ձևում այդ* ն-*ն արդեն չկար: Եվ երրորդ՝ գրաբարյան վերջնահանգ* ն-*ով մի շարք կազմություններ հետագա շրջանում դուրս են եկել գործածությունից, իսկ համապատասխան արմատներով համարժեք (կամ այլ) կազմություններում* ն-*ն արդեն չի եղել, քանի որ բացառվել է համաբանության զորությունը:*

Այն բառերը, որոնք նորակազմություններ են, սակայն պահպանել են ն-*ն կամ համաբանությամբ են կազմվել, կամ հին են, բայց մատենագրությամբ չեն ավանդվել, մեզ են հասել բանավոր ճանապարհով:*

Այն բառերը, որոնք գրաբարում զուգահեռաբար հանդես էին գալիս ն-*ով և առանց* ն-*ի, արդի հայերենում բաղադրվել են միայն առանց վերջնահանգ* ն-*ի:*

Բաղադրության վերջին բաղադրիչ լինելու դեպքում Ա խմբի բառերի գերակշիռ մասը բաղադրվել է առանց վերջնահանգ ն-*ի:*

Համառոտագրություններ

ԱԲ – Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

ՀԱԲ – Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Երևան, 1971, հ. II, Երևան, 1973, հ. III, Երևան, 1977, հ. IV, Երևան, 1979:

ՆՀԲ — Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ СЛОВ В ГРАБАРЕ, ОКАНЧИВАЮЩИХСЯ НА – Ն

АРЕН САНТОЯН, ШОГИК ГУКАСЯН

Р е з ю м е

В древнеармянском языке выявлено значительное количество слов, оканчивающихся по схеме «согласное + *ն*», которые имели особенный тип склонения. В качестве объекта

исследования выявлено 160 слов, которые были разделены на три группы:

А. Слова, которые в современном армянском потеряли слогообразующую *ն* и имеют независимое употребление. По нашим подсчетам, число слов в этой группе составляет 87.

Б. Слова, которые в современном армянском сохранили слогообразующую *ն* и имеют независимое употребление. По нашим подсчетам, число подобных слов составляет 19.

В. Слова, первоначальная форма (словоформа) которых в грабаре не имеет независимого употребления в современном армянском (не является словоформой). По нашим подсчетам, число подобных слов составляет 50.

Во время словообразования, в зависимости от сохранения или выпадения слогообразующей *Э*, слова группы А делятся на три группы:

А1. Слова, при словообразовании которых конечный слогообразующий *ն* не сохраняется. Имеется в виду как суффиксация, так и сложение основ. Из 87 слов эти слова составляют 35.

А2. Слова, при словообразовании которых *ն* сохраняется. Эту группу из названных 87 слов составляют 22 слова.

А3. Слова, которые в сложных словах могут сохранить или утратить слогообразующий *ն*. Отмечено 30 подобных слов.

WORD-BUILDING PECULIARITIES OF GRABAR (OLD ARMENIAN) WORDS ENDING IN "Ն"

AREN SANTOYAN, SHOGHIK GHUKASSYAN

S u m m a r y

In Grabar (the Old Armenian Language) a great number of words with "consonant + ն" model ending was registered. Once, they had a special type of declension. We've studied 160 words which are presented in 3 groups:

A) Words which have lost their "ն" at the end and are freely used in Modern Armenian. They are 87 in all.

B) Words which have preserved their "ն" and are freely used now. They are 19.

C) Words, the original form of which isn't freely used in Modern Armenian. They are 50.

During word-formation depending on preservation or fall of syllable-building ն, the words of group A in their turn are divided into 3 subgroups:

a. Words which don't preserve their "ն". Of 87 words only 35 are of this kind.

b. Words which preserve "ն". Of 87 words only 22 are of this kind.

c. Words which in compound words are used both with "ն" or without it. They are 30 in all.